

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆ ՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդի անունով, որով հաստատուեց թեմական տեսչի պաշտօնում Ստեփան Տէր-Աւետիքեանը, 3 դեկտեմբերի, թ. 1782:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Սարիղամիշի Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանին յայտնել, թէ քանի՞ ընտանիք է գաղթել Տաճկահայերից. ի՞նչպէս է նոցա դրութիւնը և ի՞նչ հոգ է տարուած փախստականների համար: 12 դեկտեմբերի, թ. 1917:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Կալկաթայի Հայոց քահանաներին տեղական վարչական հաստատութիւններից ստոյգ տեղեկութիւն քաղել և յայտնել, արդե՞ք շատ տարիներ առաջ այնտեղ վախճանուել է Աղամալեան անունով անձն և ի՞նչքան դրամ է թողել մահից յետոյ: 12 դեկտեմբերի, թ. 1919:

Դիւանի գրութեամբ խնդրուեց Գեներալ-Մայօր Սուլթան-Շահին յայտնել Պետրոգրադի հայ գաղթականներին օգնող Յանձնաժողովի անդամների անուն-ազգանունները, այլ և մինչև այժմ ի՞նչպէս և ի՞նչ օգնութիւն է հասցրել գաղթականներին Յանձնաժողովը: 15 դեկտեմբերի, թ. 1927:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց պ. Սամսոն Յարութիւնեանին ըստ պատկանելոյն հասցնելու համար, Արմեանսկի Օգոսնտ քահանայ Հայրունու Նորին Վեհափառութեան անունով փոխադրած հայ կամաւորների օգտին հինգ հարիւր քառասուն և երկու ըլլաւ. (542 ը.) որ հանգանակուած է տեղական հայ ազգաբնակչութիւնից 15 դեկտեմբերի, թ. 1937:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց պ. Սամսոն Յարութիւնեանին Ասխաբատի Հայուհեաց բարեգործական ընկերութեան կողմից փոխադրած Նորին Վեհափառութեան

անունով յօգուտ հայ կամաւորների մի հարիւր ըուբլին: 15 դեկտեմբերի, թ. 1938:

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալի անունով, որով թոյլատրուեց էլեքտրականութեամբ լուսաւորել Աղէքսանդրապօլի Ս. Աստուածածին եկեղեցու ջահերը միայն: 17 դեկտեմբերի, թ. 1941:

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան պ. Յերգէյ Աւարեանի անունով՝ իւր սեփական տունը և 30,000 հազար ռուբլի Բագուի նորակառոյց Ս. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցուն նուիրելու առթիւ, որոնց տոկոսները գործադրուելու է հայ աղջիկների կրթութեան և դաստիարակութեան համար: 17 դեկտեմբերի, թ. 1942:

Իլևանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել գործող բանակը Յակովբ բանանայ Սառիկեանի անունով տպարանում գտնուած տպագրուած գրքերից, որպէս զի բաժանի հայ զինուորներին՝ ընթերցանութեամբ պարապելու համար: 18 դեկտեմբերի, թ. 1952:

Իլևանի գրութեամբ ուղարկուեց պ. Սամսոն Յարութիւնեանցին Լուգանսկից Նորին Սրբութեան անունով փոխադրած նոյն քաղաքի հայերի մէջ հանգանակած 3445 ըուբ. 60 կոպ. դրամատոմսը՝ գումարը ստանալու և ըստ պատկանելոյն յանձնելու համաձայն ուղարկողների ցանկութեան: 19 դեկտեմբերի, թ. 1954:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօզի անունով, որով ուղարկելով հանգուցեալ Սարգիս Խոճեանի կտակակատարների ներկայացրած 124,592 ըուբ. 34 կոպ. արժէթղթերի պետական բանկի ստացականները (որտեղ ի պահ են դրուած), առաջագրուեց ա) արժէթղթերը պահել Մայր Աթոռի գանձարանում, իւր ժամանակին գանձելով դրամագլխի տոկոսները, բ) առանձին հաշիւ բանալ տոկոսաբեր թղթերի և ստացուող տարեկան տոկոսի մասին. գ) տոկոսների գործադրութիւնն ամեն անգամ պէսք է լինի

ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի պիտուութեամբ, կտակի 5-րդ յօդուածի զօրութեամբ: Յայտնուեց նաև, որ կտակագումարի տարեկան տոկոսները գործադրուելու են հայազգի մանուկների կրթութեան համար ի յաւերժացումն հանգուցեալ բարեգործ Սարգիս Խոճեանի անուան: 18 դեկտեմբերի, թ. 1955:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօզի անունով, որով պատուիրուեց ստանալ Պ. Գրիգոր Զալխուշեանի հեռագրով փոխադրած տասն հազար ռուբլին՝ յօգուտ Տաճկահայ գաղթականների, մուծել Մայր Աթոռի մտից մատեան և գործադրել Նորին Վեհափառութեան յատուկ կարգադրութեամբ: 23 դեկտեմբերի, թ. 1960:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինօզին Շամախու Հայոց Կուլտուրական միութեան փոխադրած երկու հարիւր ռուբլին և պատուիրուեց մուծել մտից մատեան և Նորին Վեհափառութեան կարգատրութեամբ գործադրել Տաճկաստանից գաղթած հայերի կարիքների համար: 23 դեկտեմբերի, թ. 1967:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինօզին Մելիք-Ստեփանեանների ժառանգների Հին-Նախիջևանի փոխանորդի միջոցով ուղարկած վաթսուն ռուբլին և պատուիրուեց մուծել մտից մատեան յօգուտ դպրոցական ֆօնդի: 23 դեկտեմբերի, թ. 1968:

Նորին Սրբութեան Մակագրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինօզին Բագուի Ներսէս քահանայ Տէր-Կարապետեանի փոխադրած յօգուտ Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի (նորա 40-ամեայ յորելեանի առթիւ) յիսուն ռուբլին և պատուիրուեց մուծել Մ. Աթոռի մտից մատեան յօգուտ Ճեմարանի: 23 դեկտեմբերի, թ. 1969:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինօզին Մայր Աթոռի միաբան Հմայեակ վարդապետ Արշարունու ներկայացրած հինգ ռուբլին և յանձնարարուեց մուծել մտից մատեան՝ յօգուտ Տաճկահայ գաղթականների: 23 դեկտեմբերի, թ. 1970:

Դիւանի գրութեամբ յայտնուեց Բագուի Ներսէս քահանայ Տէր-Կարապետեանին Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ձեմարանի օգտին առաժմ փոխադրած յիսուն ուրբ համար: 23 դեկտեմբերի, թ. 1971:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօզի անունով, որով յանձնուեց Բագուից պ. Արշակ Ղուկասեանի փոխադրած հինգ հազար ուրբլին յօգուտ Տաճկահայ գաղթականների և պատուիրուեց մուծել մտից մատեան և գործադրել Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ: 25 դեկտեմբերի, թ. 1972:

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն Եպիսկոպոսի, Տիկ. Հեղինէ Խուղարաշեանի, Եղիսաբէթ Տէր-Յակոբեանի, Վարդուհի Եսայեանի, Աշխէն Մուսինեանի Տ. Շահնագարեանի, Վարսենիկ Միանսարեանի, Վերզինէ Տէր Գրիգորեանի, Սրբունի Տէր Մարտիրոսեանի, օր. Էլէօրնոր Հասան-Ջալալեանի, Նինայ Ղորղանեանի, Շուշանիկ Յարութիւնեանի, Անգելիկ Հասան-Ջալալեանի և պ. պ. Մկրտիչ Մուսինեանի, Գրիգոր Տէր-Խաչատրեանի, բժշ. Արմենակ Մելիքեանի, Աղէքսանդր Ազիզեանի, Արամ Մալխասեանի, բժ. Յովհաննէս Յովհաննիսեանի, Յովհաննէս Մելիքեանի. Վասիլ Եղիազարեանի, Գէորգ Ամիրեանի, Սիրական Տէր-Մարտիրոսեանի, Հայրապետ Գաբրիէլեանի և Գէղէօն Ահարոնեանի անունով, որով կարգուեցան Տաճկահայ գաղթականներին օգնութիւն հասցնող Յաճնաժողի անդամներ, յանձնարարելով խնամել գաղթական հայերին և բաժանել Երևանի նահանգի հայաբնակ գիւղերում և հոգալ նոցա անհրաժեշտ ծախքերը, որպէս զի զոհ չգնան այս ցրտաշունչ ձմրան ժամանակ: 25 դեկտեմբերի, թ. 1977:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինօզին տալ Մայր Աթոռի միաբան Տ. Գաբրիէլին վարդապետին Տաճկահայ գաղթականների օգտին ստացուած գումարից եօթն հարիւր ուրբլի՝ անհրաժեշտ ծախքերը հոգալու համար: 27 դեկտեմբերի, թ. 1979:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին տալ եղբայրական օգնութեան Մայր Աթոռի Յանձնաժողովին երեք հազար ուրբլի գողթականաց գումարից և ուղարկել Երևանի Յանձնաժողովին երգուեալ հաւատարմատար Գրիգոր Տէր-Սաչատրեանին երեք հազար ուրբլի: 29 դեկտեմբերի, թ. 1991:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկելով Եղբայրական օգնութեան Մայր Աթոռի կարգադիր Յանձնաժողովի անունով տուած թ. 1990 Կոնդակի պատճէնը՝ յանձնարարուեց տալ այդ Յանձնաժողովին ժապաւինեալ մտից և ելից մատեան՝ ստացուած և ծախսուած գումարները մուտք գրելու համար: 29 դեկտեմբերի, թ. 1993:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒՍՏՐՈՒԹԻՎՆԵՐԻՑ

Կոնդակ Տիմիսի Սարգիս քահանայ Իփակեանի անունով, որով, Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդի և գիմնագիծնի վերատեսչի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց: 15 դեկտեմբերի, թ. 1939:

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒՈՇՆԵՐ.

Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի մակագրական պատուէրը. «Պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինոդին աւելացնել Մ. Աթոռի Գ. Ճեմարանի նախահաշուին (1914/13 ուսումն. տարուայ) մի հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար.», որուեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին աւելացնել Ճեմարանի 1914/13 ուսումն. տարուայ նախահաշուին ևս հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար: 5 դեկտ. թ. 596: